№ 168 ՇԱԲԱԹ 2 ՕԳՈՍՏՈՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 2 ՕԳՈՍՏՈՍԻ № 168

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թ.ի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ԶՐԻԱԲԱՐ կը ստանան հետեւեալ 2 գրքերից մէկին ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» վիպէին։

ՊԱՊԱՐԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԳԻՄՆԱԶԻՍ Վ. Ա. ԼԵՎԱՆԴՈՎՍԿԻԻ
Պետական զինվորականների իրաւունքներով, երկսեռ աշակերտների համար։
Գուլիբեկայա, 10, սեփ. տուն. տելեֆ. 754

Ընդունելութեան քննութիւնները սեպտեմ.	1-ին և 2-ին		առաւ. ժ. 9-ին
Վերաքննութիւնները	»	3-ին	
Մաղթանք	»	5-ին	

Գիմնազիայի դիւանատունը բաց է օրական. 16-ից առաւ. ժամը 11-ից մինչև ցեր. ժ. 2-ը։
(հ.կ.) առ. 744. 10—1

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ից ս. թ.
Նօտար Ա. Ի. ՄԻՏԿԷՎԻՉԻ գրասենեակը
փոխադրված է Եղբ. Մանթաշեանների տունը, Գանձակայա փողոցի վրա, № 3/5. Մուտքը Գանձակայա փողոցից (բակի կողմից) և Սօլոլակսկի նրբափողոցից (պօդիէզդով)։
առ. (հ.) 743. 2—1

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 յուլիսի

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութեամբ հերքվում է Ժիվէյի շրջակայքում տեղի ունեցած մեծ ճակատամարտի լուրը։ Հաղորդագրութիւնն ասում է, որ պատերազմական գործողութիւնների սկզբից թշնամու մեծաթիւ հեծեալ զօրախմբերը գերվեցին ֆրանս-բէլգիական սահմանագլխում։ Բաւական լուրջ ընդհարում եղել է Բէլգիայում՝ Տիրդէմոնի մօտերը, որի մէջ բէլգիացիք ցոյց են տուել կարուկ դիմադրութիւն։

ԼՕՆԴՕՆ.—Բէյսէրի գործակալութիւնը հաղորդում է, որ առաւօտը ֆրանսիական արտաքին գործերի մինիստրից հեռագիր է ստացված Լիէժի դրութեան մասին։ Հեռագրի մէջ ասված է, թէ Լիէժի բերդերի անձնատուր լինելու լուրերը ճիշդ չեն։ Միայն փոքրաթիւ գերմանական զօրամասեր մտել են քաղաք գիշերով։ Բէլֆօրի և Լիէժի միջև գտնված բոլոր բերդերը դեռ մնում են անձեռնմխելի։

ԼՕՆԴՕՆ.—Յուլիսի 31-ին ծովակալութիւնն արդէն կարգադրել է սկսել պատերազմական գործողութիւններ ընդդէմ Աւստրօ-Ունգարիայի։

Բրիւսսէլից հեռագրում են, որ յուլիսի 30-ին բէլգիական զօրքի ձախ թեին սկսվեց կռիւ։ Ամեն կողմից մասնակցում էին 6000 զինուոր։ Ցաւոտ կռուից յետոյ, գերմանացիք նահանջեցին անկարգ, թողնելով շատ սպանվածների և վիրաւորների։ Նոյն օրը գերմանացիք փորձեցին յարձակման դիմել, բայց յետ մղվեցին բէլգիացիներից։ Այդ ընդհարումը առաջին կռիւն է բէլգիացիների համար բաց դաշտում։

Բրիւսսէլից հաղորդում են, որ յուլիսի 30-ի ընդհարումը անուանվելու է «Կռիւ Հալէնի մօտ»։ Կռիւը տեւեց ամբողջ օրը։ Դիստի, Հալէնի և Զէլլիկի միջև ամբողջ տարածութիւնը մաքրված է գերմանացիներից։ Դաշտը ծածկված է սպանվածներով և վիրաւորներով։ Բէլգիացի սապէօրները պայթեցրին երկու կամուրջ։ Բէլգիացիք ձեռք ձգեցին պատերազմական խոշոր աւար ու մեծ թիւով ձիեր։ 50 քառ. մետր տարածութեան վրա գտնվել են գերմանացիների 200 դիակ։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.—Անգլիայից եկած ճանապարհորդները յայտնում են, որ անգլիական հարիւրաւոր ձկնորսական ծով մտան ականները որսալու համար։ Անգլիական ծովակալութիւնը մեծ պարգև է նշանակել իւրաքանչիւր ականի համար։ Մի քանին արդէն բռնվել են։

Բրիւսսէլից հեռագրում են, որ բէլգիացիների դրութիւնը Լիէժի տակ շատ լաւ է։ Պրուսացիք վճռավել են կատաղի յարձակումները վանվելուց յետոյ։ Հազարաւոր գերմանացիներ հրաժարվում էին կռիւ գընալ։ Գերմանական զօրքերի կորուստները աւելի խոշոր են, քան մինչև այժմ ցոյց է տրված պատերազմական պատմութեան մէջ։

ԼՕՆԴՕՆ.—Բրիւսսէլից հաղորդում են, որ առաջին խոշոր հեծելազօրային կռիւը սկսվեց յուլիսի 29-ի երեկոյեան, երբ բէլգիական ուլանական գունդը հանդիպեց գերմանական ուժեղ հեծելազնդի, որ ունէր իր հետ գնդացիրներ։ Տիրէլմոնի ուղղութեամբ շարժված ուլանները կարճատև կռուից յետոյ նահանջեցին, կորցնելով երկու օֆիցէրի և փոքրաթիւ զինուորների։ Յուլիսի 30-ի առաւօտը գերմանական հեծելազօրը յարձակումը շարունակեց, բայց անկարող եղաւ կտրել բէլգիական ռազմագիծը։ Յետոյ գերմանական հեծելազօրը ենթարկվելով յարձակման բէլգիական հետիոտն գնդերի կողմից՝ ստիպված էր նահանջելու։

Լիէժի մօտերը կռիւը վերսկսվեց։ Գերմանացիք ռմբակոծում են և արշաւում բերդերի վրա, որոնք կորուկ կերպով յետ են մղում բոլոր յարձակումները։

Մամուլի բիւրօն հաղորդում է, որ գերմանական զօրաբանակի գլխաւոր ոյժերը վերջնականապէս որոշվել են։ Գերմանական մեծաքանակ փնդեր կենտրոնացել են գլխաւորապէս արևմտեան նահանգներում, իսկ արևելեան մասում սահմանները պաշտպանված են համեմատաբար թոյլ։

ՊԱՐԻԶ.—Հրատարակված է պաշտօնական հաղորդագրութիւն պատերազմական գործողութիւնների դրութեան մասին։ Վերջինները մինչև օրս ունէին բացառապէս ընդհարումների ընոյթ առաջապահ զօրամասերի միջև։ Հաղորդագրութիւնը հերքում է այն տենդենցիոզ լուրերը, թէ իբր ֆրանսիացիք Միւլհաուզէնի մօտ տեղի ունեցած ճակատամարտում կորցրել են 20,000 սպանված և վիրաւոր։ Իսկապէս կռուում մասնակցած բոլոր ֆրանսիացիների թիւը 20,000-ի էլ չէր հասնում։

Վերին Էլզասում ֆրանսիացիք ունեն բաւական խոշոր ոյժեր, որոնք յենվում են Բէլֆօրի ամրութիւնների վրա։ Ֆրանսիացիների ռազմական դրութիւնը առաջվայնման շատ լաւ է։

Լիէժից և շրջակայքից ստացվող տեղեկութիւնները նպաստաւոր են։ Բերդերը շարունակում են դիմադրել։ Բերդը պաշտպանող բէլգիացիք դիմեցին յարձակման։ Յուլիսի 29-ին գերմանացիներից գրաւված Լանդենը տաք կռուից յետոյ նորից խլվեց։ Բէլգիացիք քանդել են կամուրջներն ու երկաթուղագծերը, որոնցով կարելի էր մօտենալ գերմանացիների կենտրոնական դիրքերին։

Զինուորական մինիստրութեան յայտարարութեան համաձայն, Պոնտամուսօնի ռմբակոծութեան ժամանակ սպանվել ու վիրաւորվել են ընդամենը մի քանի մարդ և քանդվել են մի քանի տուն։

ՊԱՐԻԶ.—Հավասի գործակալութիւնը հաղորդում է, որ մինչև այժմ տեղի ունեցած ընդհարումները ցոյց են տալիս, որ ֆրանսիական արիաիլէրիան բաւականին գերազանցում է գերմանականից։

Իրանց բոլոր գործողութիւնների մէջ այս շաբաթում գերմանացիք դիմում էին բարբարոսական ձևերի, գնդակահարում էին պատանիներին, գործադրում էին ամեն տեսակ բռնութիւններ ու հրդեհումներ, գնդակահարեցին Ինիէ աւանի տանուտէրին այն պատրուակով, որ աւանի ազգաբնակութիւնը նպաստեց գինուորական գերիների փախուստին։

Օտէն գետի մօտ տեղի ունեցած ճակատամարտը, որ սկսվեց յուլիսի 29-ին, տեւեց նաև յուլիսի 30-ին։ Ֆրանսիացիների մեծ աջողութեամբ։ Ֆրանսիացիները սկզբում գերմանացիների արշաւանքից նահանջեցին, բայց յետոյ, ստանալով օգնութիւն, գիշերը փոխ-յարձակում գործեցին և ստիպեցին գերմանացիներին փութաստկի նահանջել։ Գերմանացիք կորցրին շատ սպանվածների, վիրաւորների ու գերիների և ձգեցին արտիլէրիայի մի հրետանի, երեք գնդացիր ու մի քանի արկղ ռազմամթերք։ Յուլիսի 30-ին ֆրանսիական հրետանիները, յանկարծակի բերելով գերմանական 26-րդ գնդին, ոչնչացրին նրան։ Այդ աջողութիւններից յետոյ գերմանացիք այդ շրջանում կենտրոնացրին մեծ ոյժեր։ Նրանց զօրամասերը սկսեցին նահանջել հետապնդվելով ֆրանսիացիներից։ Ինն օֆիցէր և մօտ 1000 զինուոր վիրաւոր ու գերի մնացին ֆրանսիացիների ձեռքում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Մինչև յուլիսի 30-ը Պրիմորեան ռուսական նաւահանգիստներում բռնվել են 73 գերմանական և 12 աւստրիական շոգենաւ։

Լիէժի բերդերը մնում են։ Նրանց դէմ կանգնած գերմանական զօրքերը խրամատներ են փորում։

Լօնգվի-Մօնմէդի ռազմագծից 15 կիլոմետր հեռաւորութեան վրա դէպի հարաւ՝ ֆրանսիացի զօրքերը գրաւել են գերմանական մի հրետանի և գնդակացիրներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. —Պաշտօնական։ Գեներալ-շտաբի գլխաւոր վարչութիւնը յայտնում է, որ յուլիսի 28-ին և 29-ին թշնամին Կովէնի և Սուվալկայի նահանգների սահմանում եռանդով հետախուզումներ կատարեց։ Մի ուժեղ զօրագունդ 18 թնդանօթով յարձակում գործեց Էյդկունէնի վրա, բայց յետ մղվեց։ Լանդվէրներների մի գումարտակ յարձակվեց Իւրբուրգի վրա, նրա մի մասը յետ մղվեց Բաչկա գիւղի մօտ՝ աւստրիական սահմանագլխում։ Տօմաշով քաղաքին մօտեցած աւստրիական հեծեալ գունդը յետ մղվեց։

Ռուսական ճակատի դիմաց աւստրիական զօրքերը ենթարկվում են գերմանացի զօրահրամանատարի։

Ճշդվում է այն տեղեկութիւնը, որ աւստրիական տիրոլեան և չեխական գնդերն ուղարկված են ֆրանսիական սահմանը։

Ռուսական ճակատին գերմանական զօրքերը խրամատներ են փորում Կալիշի, Կանէցպոլի և Սէրաձի մօտերը, քանդելով Վարտա գետի կամրջակները։

Լվով եկաւ գերմանական մի դիւիժաբել, ուր ռմբաձգութեան փորձերի ժամանակ պայթումից վիրաւորել է մի գերմանացի օֆիցէր, մեքենավարը և երկու զինուոր։

Էյդկունէնի մօտ կռիւը բաւական տաք էր։ Գերմանացիների կորուստները խոշոր են։

Աւստրիացիք տակաւին չեն հեռացել Բրօդից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Գեներալ-շտաբի գլխաւոր վարչութիւնը հաղորդում է. Անցնելով Գալիցիայի սահմանը, մեր զօրքերը կռուով մօտեցան Սոկալին, որ գրաւված էր աւստրիական զօրամասից։ Վանելով թշնամուն Սոկալից լուրջ կորուստներով, մեր հեծելազունդը ցիրուցան արեց հակառակորդին և յօդս ցնդեցրեց Բուգ գետի կամուրջը։

Վիսդուկը, Սոկալ քաղաքը և նրա երկաթուղային կայարանը գրաւել են մեր զօրքերը, որոնք ոչնչացրել են երկաթուղային շինութիւնները, աւստրիական պարագաները, հեռագրաթելերը և մի քանի տներ, որտեղից կրակում էին բնակիչները։

ՎԻԼՆԱ.—Բերվեցին գերմանական հինգ գնդակացիրներ և այլ զէնքեր։ Սահմանագլխում զօրքերի աջող գործողութիւնները լիակատար հանգստութիւն մտցրին քաղաքային կեանքի մէջ։ Բանկերը նորից սկսել են զեղչել մուրհակները և տալ պահ տրված դումարներն ու փոխարինութիւններ։

Զօրահրամանատար գեներալ Բէնէնկամպֆը յայտարարում է բնակիչներին, որ արգելվում է չընդունել վճարումները թղթադրամներով կամ պակասեցնել նրանց արժէքը։ Բանկերին, բանկային դրամատներին, կրպակներին ու մասնաւոր անձանց արգելված է յատուկ վճար առնել թղթադրամը հնչիւն դրամով փոխանակելիս։ Ցանցաւորները ենթարկվում են տուգանքի մինչև 3000 ր. կամ 3 ամսով բանտի։

ԲԷԼԳՐԱԴ.—Թշնամին ռմբակոծութիւնը վերսկսեց, սերբական ծանր գաւրիցները պատասխանեցին և արագութեամբ հարկադրեցին լռել թշնամու արտիլէրիային, խլվեցին թշնամուց երկու թնդանօթ։ Գիշերս հրացանաձգութիւնը շարունակվում էր գետափեայ դիրքերում։ Սավայում այսօր հեռուից թնդանօթաձգութիւն է լսվում։

ՅԷՏԻՆԻԷ.—(Ուղղած)։ Աւստրօ-Ունգարիան պաշարել է չերնոգորական ափը։

ԲԷԼԳՐԱԴ.—Յուլիսի 30-ին Սավայի մօտ Շաբացից մինչև Բէլգրադ տեղի էր ունենում թշնամու ապարդիւն թնդանօթաձգութիւն։

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ներքին գործերի մինիստրը, ընդառաջելով ազգաբնակութեան լրված սպասողական դրութեանը՝ տեղեկութիւններ ստանալու պատերազմի դաշտից, և նպատակայարմար գտնելով օգտվել այդ նպատակով Պետ. Հ. Գործ. բիւրօներից, հրահանգեց նահանգապետներին անարգել ու անյապաղ վկայականներ տալ գործակալութեան բիւրօներին հրատարակելու համար բոլոր ցանկացողներին ոչ միայն քաղաքներում, այլ և՝ ցնոր կարգադրութիւն՝ շինական վայրերում, գրաքննչական կանոնադրութեան 114-րդ յոդուածի ծանօթութեան կարգով։ Մասնաւոր հեռագիրներ տալը այդ հրատարակութիւններում թոյլ է տրվում գրաքննչական կանոնների գործադրութեամբ։ Միաժամանակ վարչական մարմիններին առաջարկված է հսկել, որպէսզի բիւրօներ հրատարակողները ու վաճառողները չը շահագործեն հասարակութեանը բարձր հատավաճառութեամբ։ Մինիստրութիւնը հնարաւոր գտաւ նաև ուղարկել պատերազմի ընթացքում իր հաշուով գործակալութեան բիւրօներին նահանգական և գաւառական զէմստվային վարչութիւններին պայմանով, որպէսզի նրանք տարածեն բիւրօներին գիւղերում։

Պ. Հ. Գործ.-ը շարունակ ստանում է բազմաթիւ հեռագիրներ, որոնք վկայում են խոշոր նուիրաբերութիւնների մասին թէ հասարակական կազմակերպութիւններից և թէ մասնաւոր անձերից։

Մինիստրների խորհուրդը հնարաւոր գտաւ բաւարարել Կարմիր Խաչի Ընկերութեան միջնորդութիւնը, որպէսզի պատերազմի ժամանակ հեռագիրների վրա դրվի 10 կ. տուրք, որից 5 կ.-ը կը յատկացվի Կարմիր Խաչին, 5 կ.-ը վիրաւորներին օգնող Ալէքսանդրեան կոմիտէին։

Մինիստրների խորհուրդը իրաւունք տուեց ֆինանսների մինիստրին, համաձայն 1914 թ. յուլիսի 30-ի օրէնքի, աւելացած ակցիզ նշանակել օղու, ապիրտի, գարեջրի և ծխախոտի վրա։

Ուշադրութեան առնելով Ռուսաստան վերադարձող օտարերկրեայ կրթական հաստատութիւններում սովորող հրէաների աղքատ դրութիւնը, որոնք իրաւունք չունեն ամենուրեք բնակութեան, մինիստրների խորհուրդը հնարաւոր գտաւ թոյլատրել մնալ երկու ամսով Պետերբուրգում՝ իրանց գործերը անօրինելու համար։

Մինիստրների խորհուրդը թոյլատրեց բոլոր այն անձանց, որոնք իրաւունք ունեն ենթարկվել 1914 թ. քննութիւնների բժշկի կոչում ստանալու համար, տալ բժշկի դիպլոմ կրճատ քննութիւն տալուց յետոյ։ Քննութիւնը նշանակված է յուլիսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը։

Բարձրագոյն հրամանով, Պետ. Դումայի անդամներ կոմս Բոբրինսկին, Նովիկովը, Կրիվոշեինը, Կուզմինը, Էնգելգարդը, Կարաուլովը, Կորֆը, Իշխան Գոլիցինը, Վէլիխովը, Դէմիդովը, Լազարիրսկին և այլք, որոնք մտել են գործող բանակի շարքերը, պահելու են պատերազմական գործողութիւնների ամբողջ շրջանում Պետ. Դումայի անդամների կոչումը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Եկաւ Բերլինի ռուսաց դեսպանը դեսպանատան պաշտօնեաների հետ, անցնելով Շվէցիայի վրայով։

Քաղաքներին և առհասարակ ազգաբնակութեանը անհրաժեշտ կենսական պիտոյքներ ապահովելու նպատակով Պետերբուրգում, Մոսկվայում, Կիէվում, Խարկովում, Ռոստովում, Վօրոնէժում, Բրէստում, Սամարայում և Սիմբիրսկի Նովո-Նիկոլաէվսկում բոլոյական կոմիտէներում հաստատված են առանձին խորհրդակցութիւններ, որոնց յանձնարարված է կանոնաւորել այդ մթերքների ներմուծումը, իրաւունք տալ հերթից դուրս գնացքները բեռնելու քաղաքային, հասարակական և մասնաւոր հաստատութիւններին։ Երկաթուղիներով շատ սպով ապրանք ստացողները պէտք է դիմեն այդ խորհրդակցութիւններին բոյոնական կոմիտէների նախագահների միջոցով նայած այն տեղին, ուր ուղարկվելու է ապրանքը։

ՉԷՐՆԻԳՈՎ. — Զէրնիգովի նահանգում բնակվող գերմանական և չեխական գաղութները, զրկված գերմանական և աւստրիական կայսրների խեւաւ վարմունքից Ռուսաստանի վերաբերութեամբ, նահանգապետի միջոցով միջնորդում են ընդունել իրանց ռուսահպատակ։

ՇՈՒՇԻ.—Հայ երիտասարդութիւնը օվացիա սարքից մեկնող ֆրանսիացի պահեստի օֆիցէրներին։

ՆՈՐ-ԲՈՒԽԱՐԱ. — Բուխարական էմիրը նուիրեց 100,000 ր. Կարմիր Խաչին։

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
31 յուլիսի

ԼՕՆԴՕՆ.—Պետական գանձատան կանցլերը անգլիական բանկի տնօրէնի հետ խորհրդակցելուց յետոյ յայտնեց, որ կառավարութիւնը համաձայնում է երաշխաւորել անգլիական բանկը հնարաւոր կորուստներից մինչև յուլիսի 22-ը ընդունված անգլիական կամ արտասահմանեան մուրհակները զեղչելու ժամանակ։

Կարմիր Խաչին օգնութեան կանչված են աւելի քան 25,000 բոյսկուսներ։

Շատ տեղերում ձերբակալել են նորից գերմանացիների, որոնք փորձելիս են եղել փչացնել երկաթուղագիծն ու հեռագրաթելերը։

Քաղաքը միանգամայն հանգիստ է։ Ազգաբնակութիւնը իր սովորական զբաղմունքներին է ձեռնարկել։ Գրաքննիչ ատեանը հսկում է սենսացիոն տեղեկութիւնների տարածման վրա։ Հասարակութիւնը ոչինչ չը գիտէ զօրքերի տեղաշարժութեան մասին, բացի պաշտօնական տեղեկութիւններից, որ հրատարակում է կառավարական մամուլի բիւրօն։ Առևտուրն ու արդիւնաբերութիւնը մասամբ թուլացել են, սակայն գործազրկութեան բողոք լսելի չէ, որովհետև կառավարութիւնը, արդիւնաբերողները և առևտրականները աշխատում են բոլորին ապահովել աշխատանքով։ Զօրահաւաքը կատարվում է շատ կանոնաւոր։ Կառավարութիւնը ունի մարդիկ պահանջածից աւելի։

ՖԻՄԼԱ.—Բոլոր հնդիկ պարագլուխները իրանց ծառայութիւններն առաջարկեցին Մեծ-Բրիտանիային։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 յուլիսի

ԼՕՆԴՕՆ.—Կէս գիշերին պատերազմ յայտարարվեց Աւստրօ-Ունգարիային։

ՊԱՐԻԶ.—Գերմանիան շարունակում է ազդել չէզոք պետութիւնների վրա, անդամ Բէլգիայի վրա, խոստանալով մասնակից անել ապագայ նուաճումներին։ «Տանի» Բրիւսսէլի թղթակցի ասելով, Գերմանիան առաջարկեց Բէլգիային դադարեցնել կռիւը, խոստանալով անձեռնմխելիութիւն և նոյն իսկ ընդարձակել երկիրը։ Առաջարկութիւնը մերժվեց թագաւորից իբրև վիրաւորական առաջարկ։

Մամուլը բողոքում է Թիւրքիայի յայտարարութեան դէմ, վերաբերեալ գերմանական յածանաւերի գնման։ «Էքօ-դը-Պարիս» ասում է. «Թիւրքերը մեծ անզգուշութիւն կատարեցին, առաջ բերելով իրանց դէմ ընդհանուր բուռն զայրոյթ, որ ընդունակ է նետել Բալքանային վերջնականապէս սլաւեանականութեան գիրկը, իսկ Ֆէրդինանդ արքային Ադրիանուպոլիս»։ Լրագիրը յարակցում է, որ միջազգային պայմանագրերով՝ պատերազմող կողմերը իրաւունք չունեն վաճառել ռազմանաւեր չէզոք պետութիւններին»։

Կ. Պոլսից հեռագրում են. «Թիւրքաց կառավարութիւնը յայտնեց, որ նա թոյլատրեց «Գեբէն» և «Բրէսլաու» յածանաւերին անցնել Դարդանելով այն պատճառով, որ նրանք գնված էին Գերմանիայում։ Այդ ռազմանաւերը Դարդանել մտան թիւրքական դրօշակով և գերմանացի նաւաստիները ապ ի ջան։

Իտալիան դեսպան Տիտտոնին դիմեց Ֆրանսիայում գտնվող իտալացիներին մի

կոչով, առաջարկելով նրանց մնալ իրանց տեղերում և յիշեցնելով որ ներկայումս Իտալիայում տնտեսական ճգնաժամ է և որ երկաթուղիներով տեղափոխութիւնը ներկայացնում է մեծ դժուարութիւն։ Տիտոնին ասում է, որ Իտալիան յայտնել է իր չեզոքութեան մասին և Ֆրանսիայում գտնվող իտալացիք կարող են հանդիպել լաւ վերաբերմունքի ու համակրութեան Ֆրանսիայի ազգաբնակութեան և կառավարութեան կողմից։ Քաղաքական շրջաններում կոչին տալիս են մեծ նշանակութիւն, ի նկատի ունենալով այն աչքի ընկնող դերը, որ խաղում է Տիտոնին Իտալիայի քաղաքական կեանքում։

ՊԱՐԻԶ.—«Էկլեր» լրագրին հաղորդում են, որ Տրիտոնին վստահեցրել է Դումէրգին, որ Իտալիան չի մղվի ակտիվ քայլ գործելու ներկայ պատերազմում և կը պահէ անպայման չեզոքութիւն։

Ֆրանսիական դեսպան Կամբոնը դեսպանատան պաշտօնեաների հետ մեկնեց Խրիստիանիա։

ԼՕՆԴՕՆ.— Լրագիրների թղթակիցները հաղորդում են, որ ամբողջ Բելգարիան զինվել է։ Ժողովուրդը հանգիստ է և արթուն։ Բոլոր գիւղերը պաշտպանում են շինական պահակախմբերը, օրոնք կանգնեցնում են ճանապարհորդներին և պահանջում են անցագրերը։ Մի թղթակցի 70 մղոն անցնելիս կանգնեցրել են 52 անգամ։ Հակագերմանական զգացմունքները և ատելութիւն դէպի ներս խուժողները հասել են ծայրայեղ չափի։

ՍՕՖԻԱ.—Կառավարութիւնը ռուսաց միսիային բերանացի յայտնեց, որ Բելգրիան մտադիր է խիստ չեզոքութիւն պահել։

Երկաթուղային հաղորդակցութիւնը Կ. Պոլսի հետ վերահաստատվեց։

Հրամայված է չարտահանել ուտելիք, անասուն, ձի ու վառելանիւթ։

ՕԴԵՍՍԱ.—Լուրերի համաձայն, բելգրական Վառնա նաւահանգստում ականներ դրված չեն և շրջենաւերի մուտքն ազատ է։

ՍՕՖԻԱ.—Ազգային ժողովի նիստերը յետաձգվեցին մինչև օգոստ. 16-ը։

ՃԷՏԻՆԻԷ.—Գերմանական հաւատարմատարը երէկ մեկնեց։

ԿՈՊԻՆՀԱԳԷՆ.—Բարձր Կնօրինքի հետ եկած 36 ռուսները, ի թիւս որոց կոմսուհի Ե. Ա. Վորոնցովա-Դաշկովան դուստրների հետ, մեկնում են Ֆինլանդիա։

Վիէննայի «Կոր. Բիւրօն» հաղորդում է, որ կառավարութեան կարգադրութեամբ՝ պատերազմը վարելու համար նոր միջոցներ որոնելու նպատակով՝ լրագրական իւրաքանչիւր արտակարգ յաւելուածի համարից առնվելու է 2 հելլէր։

Վիէննայից տեղեկացնում են, որ Ֆրանսիական դեսպանը մեկնեց Ֆրանսիա Շվեյցարիայի վրայով։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.— Ստոկհոլմ եկած ռուս փախստականների թիւմն է պարսից նախկին շահը։

ԲԵՐԼԻՆ.—Դաշնակցական խորհուրդը որոշեց անյապաղ բաց թողնել 5%-ային 30 միլիոն ֆրանկի փոխառութիւն։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐԱԸ

—

✦ Պետերբուրգ եկած ժող. լուս. մինիստր Կասսօն պատմում է ճանապարհին կրած չարչարանքների մասին. գերմանացիք նրան բռնել են հինգ անգամ։ Կասսօն այժմ ազատ է։

✦ Պետերբուրգում ձերբակալված 300 գերմանացի պահեստիների մօտ գտնվել են կարևոր վաւերագրեր։

✦ Պետերբուրգից մեկնեց բուլգարական դեսպանը, որպէսզի պարզէ, թէ ինչ դիրք է բռնելու Բուլգարիան այն դէպքում, երբ Թուրքիան և Բելգարիան յարձակում գործեն Սերբիայի և Յունաստանի վրա։ Աւելի շուտ՝ Բուլգարիան հանդէս է գալու այդ դէպքում ընդդէմ Թուրքիայի։

✦ Պետերբուրգի լրագիրներին հաղորդում են, որ աւստրիացիք շտապով նահանջում են դէպի Սարաէվօ։

✦ Հերքվում է լրագիրներում երևեցած տեղեկութիւնը գերմանական սոց.-դեմոկրատ կուսակցութեան պարագլուխ Լիբկնեխտի գնդակահարութեան մասին։

✦ Մինիստրների խորհրդի նախագահ Գորեմիկինի նախաձեռնութեամբ պետական հաշուով տպվում է մի միլիոն օրինակ Պետերբուրգի պատմական նիստի ստենոգրաֆիկ հաշիւը՝ հասարակութեան մէջ տարածելու համար։

✦ Դալմացիայում բռնկվել է ապստամբութիւն։

✦ Ինչպէս հաղորդում են, Աւստրիան հրաժարվում է օգնել Գերմանիային իր ռազմի նաւատորմով, պատճառաբանելով որ Անգլիայի և Աւստրիայի միջև պատերազմ չը կայ։

✦ Մայրաքաղաքից և Ռուսաստանի մի քանի քաղաքներից արտաքսվում են բոլոր չինացիք։

✦ Պետ. Դումայի անդամ Բոգդիչևվին մի կերպ աջողվել է Գերմանիայից անցնել Իտալիա։ Հայազգի պատգամաւորներ Պապաջանեանի և Աշէմեանի ուր գտնվելու մասին լուր չը կայ։

✦ Վիէննայում և Ունգարիայում կանգնած է սովի ուրուականը։ Ազգաբնակութիւնը անկարգութիւններ է գործում։

✦ Բոսնիայում, Հերցեգովինայում և Դալմացիայում սեվականութիւնը գրաւվում է յարքունիս։ Ազգաբնակութիւնը խմբերով փախչում է։ Փախչողներին գընդակահարում են։

✦ «H. B.»-ին հեռագրում են Լոնդոնից, որ «Times»-ը կարծում է, թէ իբր պատերազմի գլխաւոր հետաքրքրութիւնը կենտրոնացած է Միջերկրական ծովում, ուր գերմանական նաւատորմը վճռել է ոմբակոծել անգլիական նաւատորմին ստորջրեայ ռազմանաւերով։ Սակայն դրա առաջին փորձերն անաջող անցան։

✦ Բրիւսէլից հեռագրում են, որ ֆրանսիական և բելգիական հեծելազնդերը նեղելով գերմանացիներին ստիպում են վերջինները աստիճանաբար յետ քաշվել Լիւկսէմբուրգից։

✦ Հռոմից հեռագրում են, որ Աւստրիան մտադիր է գրաւել Վենետիկը և Լոմբարդիան, եթէ Իտալիան շարունակէ իր այժմեան տակտիկան։ Եթէ Աւստրիան իրագործի այդ սպառնալիքը, այն ժամանակ Իտալիան իսկոյն կը սկսի պատերազմական գործողութիւններ ընդդէմ Աւստրիայի, համաձայն իտալական հասարակական կարծիքի ու կառավարութեան որոշման։

✦ Գերմանացիք գրաւել են բելգիացիների տուած 200 միլիոնի պատուէրը Կրուպպի գործարանին, որին պատուիրված թնդանօթները վաղուց պատրաստված են և փոդերն առված։

✦ Մինիստրների խորհրդի նախագահ Գորեմեկին և արտաքին գործերի մինիստր Սազոնով յայտնեցին, որ Պետ. Դումայի պատմական նիստը անմոռանալի յիշողութիւն է թողել նրանց կեանքի վրա։ Գորեմիկինը աւելացրեց, որ կառավարութեան վերաբերմունքը դէպի Դուման կարտայայտվի մօտ ապագայում։ Այդ վերաբերմունքը հանդէս կը գայ կարևոր ակտերի մէջ։

✦ Դալմացիայում յեղափոխութիւն պայթեց։

✦ Զիֆուից հեռագրում են, որ ծովից խիստ թնդանօթաձգութիւն է լսվում։ Ենթադրում են, որ ընդհարում է տեղի ունենում եւրոպական և գերմանական յածանաւերի միջև։

✦ Նիշից յայտնում են, որ այնտեղ տեղեկութիւն է ստացվել, թէ ալբանացի ապստամբները գրաւել են Ալեսսիոն։

ԼՕՐԴ ԿԻՏՉԵՆԵՐ

—

Անգլիական գլխաւոր հրամանատար վիկոնտ Հորացիո-Հերբերտ Կիտչներ Անգլիայի պատերազմական խոշորագոյն հեղինակութիւններից մէկն է։ Նա ծնվել է 1850 թ-ին։ Կիտչներ իր զինուորական կրթութիւնը ստացել է Woolwich-ի զինուորական ճեմարանում. 1870 թ. Ֆրանսիական զօրքի մէջ որպէս կամաւոր կռուել է Գերմանիայի դէմ։ 1879—1880 թ. թ. նա բրիտանական փոխհիւպատոս է եղել Երզրումում, իսկ 1882 թ. նորից մտել է զինուորական ծառայութեան։ 1884 թ. արշաւանքին նա մասնակցել է որպէս գէներալ, 1886 թ. նշանակվել է Սուակիմի նահանգապետ, 1888—1889 թ. թ. զօրամասի հրամանատար է եղել, իսկ 1892 թ-ին ստացել է եգիպտական զօրքի հրամանատարի պաշտօնը։ 1897 թ. նա վճռական արշաւանք է մղել Մահդիի դէմ, նուաճել է Դոնգոլան, գրաւել է Բերբերը, 1898 թ. ապրիլի 8-ին Ջարդ է տուել Արբադի մօտ դերվիշներին, իսկ նոյն թ-ի սեպտեմբերի 2-ին ոչնչացրել է Օմդուրմանի մօտ եղած Մահդիի կառավարութեան տակ գտնված զօրքը։ Այդ արշաւանքի համար նա ստացել է պէր կոչումը, որպէս Խարթումի և Ասպալի լորդ, և դրամական մեծ նուէր։ 1899 թ. Կիտչները նշանակվեց Սուդանի գէներալ-նահանգապետ, յետոյ կարգվեց Հարաւային Աֆրիկայի գլխաւոր շտաբի պետ։ Նա ղեկավարում էր այն գործողութիւնները, որոնցով վերջնական պարտութիւն կրեցին բուրները։ 1900—1902 թ. թ. նա գլխաւոր հրամանատար էր։ 1902 թ. պարլամենտը նրան շնորհակալութիւն յայտնեց հարաւ-աֆրիկեան կոմպանիայի համար, միևնոյն ժամանակ նրան շնորհվեց վիկոնտի կոչում և դրամական նուէր։ 1902—1909 թ. թ. Կիտչներ գլխաւոր հրամանատարն էր հնդկական զօրքի, որի մէջ նա լուրջ բարեկարգութիւններ է մտցրել։ 1909 թ. նա նշանակվեց գէներալ-ֆելդմարշալ, 1910 թ. նշանակվեց պետական ինքնապաշտպանութեան կոմիտէի անդամ։ Վերջին ժամանակներս, 1911 թ., Կիտչները Եգիպտոսի անգլիական ընդհանուր հիւպատոս և կոմիսար էր, այսինքն փաստապէս Եգիպտոսի ընդհանուր նահանգապետ։

ԾՈՎԱԿԱԼ ՋԻԼԼԻԿՕ

—

Անգլիական նաւատորմի գլխաւոր հրամանատար է նշանակված փոխ-ծովակալ սըր Ջոն Ջիլլիկոն (Jellicoe)։ Ծովակալ Ջոն Ջիլլիկոն ծնվել է 1859 թ. և պատանի հասակից մտել է նաւատորմի մէջ։ 1882 թ. նա մասնակցել է եգիպտական արշաւանքին, 1893 թ. նշանակվեց զինուորական նաւերի հրամանատար, 1898—1901 թ. թ. ծառայում էր Ձինաստանում։ Պէկինի դեսպանատունը փրկելու համար եղած արշաւանքի ժամանակ, նա նշանակվեց ծովային զօրամասի հրամանատար և փոխ-ծովակալ սըր Սէյմուրի շտաբի պետ։ 1907 թ. սըր Ջիլլիկոն կարգվեց փոխ-ծովակալ և նշանակվեց Ատլանտեանի նաւատորմում։ 1908—1910 թ. թ. նա ծովակալութեան լորդ-կոմիսար էր, 1910—1911 թ. թ. հրամանատարում էր Ատլանտեանի նաւատորմը, իսկ 1911—12 թ. թ. Մեսրոպոլի նաւատորմի երկրորդ էսկադրան։ 1912 թ-ից սըր Ջիլլիկոն ծովակալութեան երկրորդ լորդն է։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՍՏԱՌԸ

(Ժամանակակից խոհեր)

—

Վերին աստիճանի հետաքրքրական օրերումն ենք ապրում։ Ներկայ դարում մենք ականատես ենք լինում մի զարմանալի երևոյթի։ Եւրոպայի հզօր պետութիւններից մէկը՝ Գերմանիան անսպասելի կերպով իր ձեռնոցը գցեց եւրոպա-ասիական մի այլ հզօր պետութեան՝ Ռուսաստանի առաջ։ Մեր նամարտի այս յանդուգն հրաւէրին արձագանք տուին և մի շարք ուրիշ առաջնակարգ և երկրորդական պետութիւններ, ակնյայտնի տեսնելով մարտակոչի հրաւէրը կարդացողի ամօթալի ոտնձգութիւնները և անձնապաստան յոխորտանքը։ Եւ խաղաղ, անդորը ծով ու ցամաք ալեկոծութեան ենթարկվեցին և արար-աշխարհ միմեանց խառնվեց։ Թայմզի ափերից մինչև Հենոս և Էլբա, Սենայի ափերից մինչև Դանուբ, Վիսլայից մինչև Նեվա մի ահեղ փոթորիկ բարձրացաւ։ Ահա այս փոթորկի ու մրրկի ժամանակ միջնադարեայ քամիները տարուբերեցին, շուռ տուին ինքնիրան Արևմտեան Եւրոպայի ամենից կուլտուրական կառավարութիւնը համարող Գերմանիայի քաղաքակրթութեան պատմութեան քանոնները և, ով սարսափ, ասկեթել, մետաքսեայ պատմութեան տակից երևաց նրա պատատուած ու բորբոսնած ատառը։ Օրագրական հեռագիրներում օրը օրին կարդալով Գերմանիայից հասած տեղեկութիւնները, թէ ինչպէս այնտեղ տարդի և կուլտուրական աղգի համբաւին արատ բերող վերաբերմունքներ են ցոյց տալիս դէպի օտարականները, մարդ ապշում է, մազերը փշաքաղվում. վիրաւորանք, թուք, ծեծ, բանտարկութիւն—օր չէ անցնում, որ տեղի չունենան... Մթթէ Եւրոպայում է կատարվում այս ամենը, այն Եւրոպայում, որի անունից այնքան սիրում ենք ճառել մենք ասիացիքս, որին ուզում ենք նմանվել, նրա լուսաւոր կուլտուրան իւրացնել։ Եթէ այդպէս է, ուրեմն պէտք չէ մեզ այդպիսի կեղծ լուսաւորութիւն, շինծու և պատմութեան միայն երեսը լուսաւորող քաղաքակրթութիւն։ Մեր անգրագէտ, տգէտ գիւղացին ու ռամիկը, մեր մուժիկը, որ արեխներ է հագնում և ոչխարի փափաղ դնում գլուխը, չի անի այն, ինչ որ թոյլ են տալիս իրանց անելու Գերմանիայի մայրաքաղաքում ու սահմաններում օսլայած շապիկ հագնող, ցիլինդր ծածկող ու պարտադիր կրթութիւն ստացած մարդիկ։ Ազգերի եղբայրութեան, համերաշխութեան ու խաղաղութեան սիրելի կոչը ու տարիներ առաջ Հաագայում տեղի ունեցած կոնֆերէնցիայի ինիցիատիվան պատկանում է «արջերի երկրի» մեծ Վեհապետին, Ռուսաստանի Գահակալին։ Ներկայ դէպքում էլ նոյն բարձունքներից էր, որ Աւստրիային և Գերմանիային յորդորներ կարդացվեցին չը խանգարել համաեւրոպական հանգիստը և խաղաղ միջոցներով լուծել քաղաքական կնճիռը։ Բայց Բերլինի դառոզ վեհապետը նաբուգոդոնոսորեան անբարտաւանութեան հասած՝ չուզեց լսել խաղաղութեան կոչը և իրան ձիթենիի ճիւղ տանող սուրհանդակին ժանիքներ ցոյց տուեց։ Ի՞նչ բան է սա. մարդ մտածում է՝ ուրեմն մտաւոր Գերմանիայի մի շարք ականաւոր մարդիկ, անուանի փիլիսոփաներն ու բարոյագէտները, որոնք ջանում էին աշխարհ կրթելու, հեռու հորիզոններ լուսաւորելու, չէ՞ կարողացան իրանց հայրենիքը կրթել, բիրտ բարքերը մեղմացնել։ Երանց մտքի ռեֆլեկտորը լուսաւորելով ու շողշողացնելով Գերմանիայի պատմութեան երեսը, չէ՞ կարողացան ներս թափանցել մինչև նրա ներսը, ատառը։ Գէօթէներն ու Շիլլերները, Ուլանդներն ու Հայնէները իրանց իմաստասիրական մտքերով ու գեղեցկախնչիւն քնարներով երբ տիեզերքի հոգին էին գրաւում, չէ՞ կարողացան իրանց ազգի հոգին ու սիրտը ազնուացնել։ Բիսմարկներ, Լիմբախներ, Մենցէլներ ու Կլուգեներ երբ իրանց սքանչելի նկարներով յաւերժ-գեղեցիկը, բարին պատկերացրին, չէ՞ կարողացան ազդել իրանց մեծամեծների բարքերի վրա։ Բախ, Մենդելսոն, Բեթհովէն, Մէյերբեր, Վագներ և նման հանճարեղ երաժշտագէտներ երբ համայն մարդկութեան սրտի լարերը շարժեցին ու հոգիները բերկրացրին, չէ՞ կարողացան իրանց մայր երկրի հոգին ազնուացնել։ Ճիշդ է ուրեմն, որ ասում են՝ «ճարգն իր տակին լոյս չի տայ»։ Բայց քա՛ լիցի, մենք ուզում ենք հաւատալ, որ Գերմանիայի ժողովրդական մասսաները, դեմոկրատիան չէ՞ վերև յիշված անպատիւ արարքների հեղինակը, այլ վերին շրջանները են, շովինիզմի մէջ մինչև պարանոցները թաթախված «էքսէլանսներն» ու պաշտօնեաները. հասարակութիւնը նրանց տգեղ արարմունքների գործում անմասն է և պատասխանատու չէ ապագայի և մարդկութեան հանդէպ. նա անպայման զոհ է իրանցից իսկ երես առած ու mania-grandiosa-ով տառապող վեհապետի դանդիշոտական սխրագործութիւններին։

Այնտեղ պատերազմը համազգային չէ, ժողովրդական չէ ինչպէս մեզանում. այնտեղ «երկաթէ կանցլերի» օրերից մնացած շղթաներն ու փականքներն են կաղկանդել արդարախօս մարդկանց ձեռքերն ու բերանները և նրա երկաթէ սուրն է, որ կախված է խաղաղ և կուլտուրական ժողովրդի գլխին։

Այլապէս ով է ինչ ասում. պատերազմիը պատերազմողի դէմ, այժդ գործ դիր քեզ պէս ուժեղի և զինված դէմ։ «Պատերազմները ազգերի միջև անհրաժեշտ են»—ասել է մի նշանաւոր քաղաքագէտ. պատերազմը ժողովուրդների էկզամենն է, քննութիւնն է։ բայց երբ դու գաղաված ու վիրաւոր բորենու նման ուժդ գործ ես դնում անպէտ, անպաշտպան և ոչ մի մեղք չունեցող ճանապարհորդների ու անցորդների դէմ, որոնք եկել էին քո կուլտուրական բարիքները վայելելու—այդտեղ արդէն, Գերմանիա, դու իւրաքանչիւր տարի բաղմաթիւ միսիոնարներ ես ուղարկում Ասիայի խուլ անկիւնները Մեծ Նազովրեցու աստուածային վարդապետութիւնը տարածելու. բայց երևում է, որ դու ինքդ այդ միսիոնարներից դեռ ես դասեր առնելու պէտք ունես։ Ահա այստեղ է, որ աւելի մեծանում, վիթխարանում է ու լեռնաչափ ուրուականով պատկերանում մեր առաջ անմահ «մեծ գրողը երկրին ուսաց», որ քրիստոնէական բուն էութիւնը դեռ շատ հեռու է մեր ժամանակի կեղծ քաղաքակրթութիւնից, որ այդ քաղաքակրթութեան ներսը, աստառը դեռ մնացել է վայրագ ու բարբարոս։ Իսկ ներկայ քաղաքական իրարանցումի միջոցին ով առաջինը ցոյց տուեց հոգու և բարքերի այլանդակութիւն, եթէ ոչ Գերմանիայի պաշտօնէութիւնը և երկաթի բէժիտը։ Եւ միանգամայն բնական էր, որ հոգով մաքուր՝ ինչպէս Սիբիրի ձիւնը, սրտով լայն՝ ինչպէս իր լայնածաւալ երկիրը՝ Ռուսաստանը պէտք է դուրս գար զսպելու տնտեսական աշխարհաղողդ յոխորտանքը, իր հետ ուներով անգլիական, ֆրանսիական մեծ ազգերին։ Պէտք էր դէն գցել Գերմանիայի պատաքինով բեհեզ, բայց աստառով բորբոսնած ծանր վերարկուն։

Աստուած մեզ հետ։ Q.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԹԵՄԵՐԻ ԹԻՒՆ ԱԻԵԼԱՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ *)

V

Այսպէս անդամահատելով թեմերը և կազմելով մի ուրիշ առանձին-առանձին թեմ, արդեօ՞ք վանդի չենք ենթարկում եղած կօնսիստորիաների գոյութիւնը, կամ կարող կը լինե՞ն նոր կազմվելիք կօնսիստորիաները իրանց գոյութիւնը պահպանել։ Մենք վերևում ասացինք, որ կօնսիստորիաների գոյութիւնը պահպանելու համար հարկաւոր է 7000 ր. մուտք։ Այժմ տեսնենք, թէ այդ նոր կազմվող թեմերը կամ մնացած հները իրանց արդիւնքներով կարող կը լինե՞ն իրանց գոյութիւնը պահպանել թէ ոչ։

Բեսարաբիայի—որ և Նոր-Նախիջևանի—թեմը ունենում է տարին 11,367 ր. 91 կ. մուտք, նոյնքան էլ ծախք. այս թեմը մնում է անշարժ, հին ձևում։ Աստրախանի թեմը ունենում է 6530 ր. մուտք, իսկ ծախք 6329 ր. 32 կ., աւելորդ մնացած 200 ր. 68 կ. ուղարկվում է սինոդ. այս թեմն էլ մնում է անշարժ։ Շամախու թեմը ունենում է մուտք 8016 ր. 19 կ., իսկ ծախք 6236 ր. 32 կ., աւելորդ մնացած 1779 ր. 87 կ. ուղարկվում է սինոդ. այս թեմն էլ մնում է անշարժ։

Երևանի թեմը բաժանվում է 5 մասերի։ Զուտ Երևանի թեմը ունի 20,540 ր. մուտք, իսկ ելք 14,772 ր., Ալէքսանդրօպոլի, Կարսի, Հին-Նախիջևանի և Տաթևի հոգևոր կառավարութիւնների ծախսերի աւելորդ ստացվածները Երևանի կօնսիստորիան տարին ծախսում է 12,720 ր. 32 կ., ուրեմն նա առանց հոգևոր կառավարութիւններից ստացած 14,772 ր. եպասաներին իր գոյութիւնը կարող է պահպանել, այլ և աւելորդ մնացած 7820 ր. ուղարկել սինոդին, փոխանակ ուղարկելու 22,591 ր. 68 կ։ Զէ՞ որ հոգևոր կառավարութիւնները բաժանելով կօնսիստորիայից՝ կը պակասեն նրա գրագրութիւնները, հետևաբար կը պակասի ծառայողների թիւը։

Ալէքսանդրօպոլի այժմեան վիճակը մուտք ունի 5040 ր։ Եթէ կօնսիստորիայի գոյութիւնը պահպանելու համար հարկաւոր է 7000 ր., ուրեմն պակասութիւն կը զգացվի 1960 ր։

Կարսի այժմեան վիճակը մուտք ունի 5700 ր., ուրեմն սրանն էլ պակաս կը լինի 1300 ր։

Հին-Նախիջևանի վիճակը մուտք ունի 6220 ր., ուրեմն էլի պակասում է 780 ր։

Տաթևի կամ Զանգեզուրի վիճակը մուտք ունի 4800 ր., ուրեմն սրան էլ պակասում է 2200 ր։

Նախ՝ այստեղ պէտք է ասել, որ եթէ Շամախու կօնսիստորիան իր գոյութիւնը պահպանելու համար ծախսում է 6236 ր. 32 կ. և Աստրախանինը 6329 ր. 32 կ., ինչու այդ միևնոյն գումարով անկարող են իրանց գոյութիւնը պահպանել Ալէքսանդրօպոլի, Կարսի, Հին-Նախիջևանի և Տաթևի կօնսիստորիաները. իսկ աչքի առաջ ունենանք այժմեան ժամանակի կեանքի պայմանների թանգ լինելը, մենք վերցրինք 7000 թիւը։ Ակներև պակասը անշուշտ ժողովուրդը կը լրացնի իր միջոցներից։

Ղարաբաղում պակի աթոռահաս նախկին ժամանակում եղել է 3 ր., յետոյ այդ թիւը բարձրացել է 7 ր. 40 կ., իսկ 1908 թ-ից այդ նօրման դարձվեց 11 ր., այսինքն սովորականից 3 ր. 60 կ. աւելի։ Եւ պակադրամ երբ ստացվում էր տարին 4—5000 ր., յանկարծ բարձրացաւ 3000 ր., այս էլ աւելացնեմ, որ դեռ իւրաքանչիւր պակի աթոռահասից, այսինքն 11 ռուբլուց 2 ր. հանվում է յօգուտ թեմական հոգևոր դպրոցի, 50 կ. հոգևորականների այրիների և որբերի հոգաբարձութեան արկղիկին և 50 կ. դպրոցական վարչութեան, իսկ մնացած 8 ր. հաշվվում է աթոռահաս։ Արդարև այս նորամուծութիւնը Ղարաբաղի, Դիզակի և այլ տեղերի շրջաններում զայրոյթ պատճառեց և բողոքների տեղիք տուեց, բայց այն ժամանակվայ գործակալների վերատեսուչը վրա հասաւ, հանգստացրեց նրանց և հասկացրեց, որ իւրաքանչիւր անհատ իր որդուն պակելիս՝ երբ անում է 400—600 ր. ծախս, չը պիտի խնայի 11 ր., երբ այդ գումարով պահպանվում են մեր ազգային հիմնարկութիւնները։ Ժողովուրդը հանգստացաւ և վճարում է 11 ր. պակադրամը։

Այսպէս՝ Ալէքսանդրօպոլի, Կարսի, Հին-Նախիջևանի և Տաթևի կօնսիստորիաները իրանց գոյութիւնը պահպանելու համար պէտք եղած պակադրամ արդիւնքի վրա դարձեալ պէտք է աւելացնեն իւրաքանչիւր պակին 1 կամ 2 ր.։ Այդ տեղերում պակադրամ կամ աթոռահաս, կարծում եմ, մինչև 6 ր. 40 կ. է և ոչ 11 ր.։ Առաջին տարիներում դժուարութիւններ կը ծագեն, սակայն տարիների ընթացքում արդիւնքները կանոնաւորվելով՝ ոչ միայն կը հասնեն 7000 ր., այլ և դրանից բարձր։

Այստեղ պէտք է աւելացնել և այն հանգամանքը, որ Զանգեզուր գաւառին են պատկանում, ուրեմն Տաթևի վիճակին, Ղարաղլաղ, Հարաբ և Ալիդուլի գիւղերը, որոնք միասին կազմում են 705 տուն և 5500 հոգի ժողովուրդ։ Այս երեք գիւղերը պաշտօնական գործերով կապված են Գորիս քաղաքի հետ, որովհետև այդտեղ են կենտրոնացած գաւառապետը, հաշտարար դատաւորը, միջնորդը, պետական դանձարանը և այլն. իսկ այս 3 գիւղերը հոգևոր գործերով կապված են Ղարաբաղի կօնսիստորիայի հետ. բաւական կը լինի, որ այս 3 գիւղերը մնացվեր Տաթևի ապագայ թեմին, նրան թէ նիւթապէս և թէ բարոյապէս զօրացնելու համար։

Ղարաբաղի կօնսիստորիան տարին ունենում է մուտք 17,778 ր., իսկ ծախք 14461 ր. 97 կ։ Ուրեմն սա փոխանակ իւրաքանչիւր տարի սինոդին ուղարկելու 5110 ր. 20 կ. աւելորդ մնացած գումարը, կուղարկէ միայն 3316 ր. 3 կ., որովհետև Նուխուց այլ ևս չը պիտի ստանայ աւելորդ մնացած 1824 ր. 25 կ։

Նուխու վիճակը տարին մուտք ունի 4794 ր. 25 կ., ուրեմն սրան էլ պակասում է 2205 ր. 75 կ։ «Մշակի» № 98-ում ես ասել էի, որ Նուխու ապագայ վիճակը մի փոքր զարգացնելու և ուժեղացնելու համար՝ բաւական կը լինի, որ Զիվանշիրը գաւառից 15 գիւղեր—Տօնին-շէն, Մատաղիս, Դաստակերտ, Վերին և Ներքին Զայլուներ, Թալիշ, Եղակեր, Մարաղա, Մարզուշաւան, Սէյսուլան, Եարումջա, Մարալիան, Սարաւ, Դահրիլար և Հասան-ղաեա — միացվ էին Նուխու վիճակի հետ, որովհետև սրանք գրեթէ միևնոյն հեռաւորութեան վրա են գտնվում, ինչ որ Շուշու հետ են։ Այդ 15 գիւղերը կազմում են 1107 տուն և 7619 հոգի, իսկ Նուխու վիճակի հետ կը կազմեն մի քաղաք և 64 գիւղ, 7911 տուն և 56,764 հոգի։ Այս 15 գիւղերի տուած արդիւնքներով և Նուխու վիճակի պակների աթոռահասների վրա իւրաքանչիւր պակին աւելացված մի-մի բուբլով հեշտութեամբ կը գանձվի Նուխու կօնսիստորի այն գոյութիւնը պահպանելու դրամը։

Զիւանշիրը գաւառից 15 գիւղերը անդամահատելով և միացնելով Նուխու վիճակին, Ղարաբաղի կօնսիստորիայի գոյութիւնը ոչ մի կերպով վտանգի չի ենթարկվում, որովհետև նա ունի դեռ ևս առանց ծախսելու

*) Տես «Մշակ» № 167.

ատկոյն 3316 ք. գրաստ, իսկ սէր գիրքերը հայ գրականութեան 1200 ք., գրքերը նաեւ տարբեր տպագրութիւն 1200 ք., գրքերը Ղ. Ալամդարեանի 2000 ք., գրքերը Ս. Ալամդարեանի 600 ք., գրքերը Ֆիլիպոսեանի 400 ք., գրքերը Շիրազի 480 ք., գրքերը Ղազարեանի 600 ք., գրքերը Ներսիսեանի 1200 ք., գրքերը Հեղինէ Ալամդարեանի 1316 ք.։

Ներսիսեան գրադարանի գրքերը 2000 ք., գրքերը Ղազարեանի 30 քառասնամեայ գործունէութեան գրքերը 3316 ք., իսկ գրադարանի գրքերը 3316 ք. գրքերը Ֆիլիպոսեանի 38 ք. գրքերը Ներսիսեանի 5110 ք. գրքերը Ղազարեանի 3980 ք. գրքերը Ալամդարեանի 3 գրքերը Ներսիսեանի 12 գրքերը Ֆիլիպոսեանի 1 գրքերը Ալամդարեանի 15 գրքերը Ներսիսեանի 3 գրքերը Ֆիլիպոսեանի 1 գրքերը Ալամդարեանի 1½ գրքերը Ներսիսեանի 1 գրքերը Ֆիլիպոսեանի 1 գրքերը Ալամդարեանի 2 գրքերը Ներսիսեանի 1 գրքերը Ֆիլիպոսեանի 1 գրքերը Ալամդարեանի 1

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սալմաստ, 23 յուլիսի

«Մշակի» № 147-ում «Ռաշիդ» ստորագրութեամբ Սալմաստից գրված թղթակցութիւնը անճիշդ տեղեկութիւններ է պարունակում տեղիս դպրոցների մասին. 1) Սարամէրիկի և Դրիշկ-Շէյթանաւայի դպրոցները չեն փակվել «տարվայ համաբեռ սկզբից», ինչպէս հաղորդում է թղթակիցը, այլ առաջինը դասերը դադարեցրել է ապրիլի 20-ին, իսկ երկրորդը՝ մայիսի 16-ին։ 2) Ուսուցիչ պ. Արամ Բաբայեանի վերաբերմամբ շրջ. տեսուչը ժամանակին տարվայ սկզբին պաշտօնապէս տեղեկանում է թեմական դպրոցի տեսչից նրա վկայական մասին և այդ յայտնի է դառնում իրան Բաբայեանին և որոշ մի շրջանի տեղումս. կարծում եմ՝ մի տեսուչ մի ուսուցչի նկատմամբ այսքանից աւելին չի կարող անել, երբ ուսուցիչն ինքը կամաւոր կերպով թողնում է իր պաշտօնը և ոչ թէ իր թեկնածութիւնն է դնում, ինչպէս պ. թղթակիցն է հաղորդում։ 3) Սառնայի դպրոցը փակման վտանգի առաջ չէ կանգնած և ուսուցիչ պ. Մ. Միքայէլեանը (ըստ թղթակցի Միխо) չէ վարկաբեկել դպրոցը։ Ընդհակառակը, հոգաբարձութիւնը և հասարակութիւնը զոհ են նրանից, չեն թոյլ տուել հեռանալ, առաջիկայ տարվայ համար հրաւիրել են աւելացնելով ռոճիկը և խօսք տալով՝ հրաւիրել մի վարժուհի օգնական։ Ուսուցիչը, ճիշդ է, չունի ցենդ և լայն պատրաստութիւն, բայց եռանդուն է և բարեխիղճ, որով գերազաս է շատ ցենզաւոր ուսուցիչներից։

Տեսուչ Սալմասի դպրոցների՝
Աւ. Գուլոյեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 19 յուլիս

Սօց.-դեմ. հնչակեաններու ձերբակալութիւն.—Թիւրքասիրականութիւնը—կամ եթէ կուզէք իթթիհատականները—որ յայտնի անճարակութիւն կամ չկամութիւն մը ցոյց տուաւ խրդիվին մահափորձի կազմակերպիչները գտնելու կամ տերրորիստին մեղսակիցները ձերբակալելու գործին մէջ, ամսոյս 17-ին, հինգշաբթի օր, զանազան կէտերու մէջ յանկարծ ձերբակալեց 30-ի չափ Ս.-Դ. Հնչակեաններ։ Ձերբակալուողներու մէջ են Համբ. Պոյաճեան (Մուրադ)՝ ազգ. երեսփ. ժողովի դեր-ատենապետ և նախկին օսմ. մէջլուս Քոչանի, Հմ. Արամեանց՝ խմբագիր «Կոհակ» թերթի և ազգ. երեսփ., Ներսէս Զաքարեան՝ ազգ. երեսփ. և անդամ կեդր. վարչութեան, Յակոբ Աւետիսեան (Արծրունի)՝ ազգ. երեսփոխան, դոկտ. Պէնոնէ՝ ազգ. երեսփ., Վ. Զէյթունցեան՝ փաստաբան, Պնակունի՝ անօրէն Դարդանէլի վարժարանին, դոկտ. Զէլալ, Սաքօ, Փարամազ և այլն։

Քննութենէ վերջ ազատ թողուած են Համբ. Պոյաճեան, Ն. Զաքարեան, Հ. Արամեան, Պնակունի և դոկտ. Զէլալ։ Միւսներուն քննութիւնները կը շարունակուին։ Քննութիւնները անձամբ կը վարեն ներքին գործոց մինիստր Թալէաթ և ոստիկ. տնօրէն Բէդրի բէյերը։

Ձերբակալման պատճառներուն մասին ոստիկանութիւնը լուռ կը մնայ։ Առ այժմ լուռ կը մնան նաև թիւրք թերթերը, կերևի վերէն տրուած հրամանի մը համաձայն։ Թալէաթ-բէյ կարդացած է հարցաքննուողներուն Սաբահ-Դիւլհանի կողմէ գրուած մի քանի նամակները վտանգաւոր պարունակութեամբ, որոնցմէ միայն մէկը իբր թէ կը յանձնարարէ եղեր այստեղի իր կուսակիցներուն մէջտեղէն վերցնել Թ-ն, այսինքն Թալէաթ-բէյը, և կը յաւելու եղեր թէ՝ եթէ կարելի ըլլայ յաջողութեամբ կատարել այդ գործը, ոսկիներու մէջ պիտի լողան։ Այսպէս խոստացուեր է իբրեւ, կատաղի հակաթթիհատական, Սաղկհօլմի նախորդ դեսպան Շէրիֆ փաշայի կողմէ։ Ի հարկէ, ուզողը կրնայ հաւատալ կամ համամիտ գտնուիլ այս զառանցանքներուն։ Բայց եթէ ստուգիւ գրուած են այդ յիմար տողերը և եթէ հնչակեան մէկ մասին կողմէ միացում տեղի ունեցած է Շէրիֆի մը կամ ուէ իթիլաֆական պառթիի մը հետ, առնուազն թիւրքահայութիւնը նոր մղձաւանջներու մատնելու անժամանակ յիմարութիւն մը, չբսելու համար ազգադաւ ոճիր մըն է։

Աւելորդ չէ հոս յիշել, թէ անցեալ տարի գումարուած ս. դ. հնչակեան վերջին պատգամաւորական ժողովին մէջ Սաբահ-Դիւլհանի պառթին ինքզինքը հռչակեց «ինքնավար Հայաստան եւրոպական կօնտրոլի տակ» նշանաբանին հետամուտ։ Իսկ Կ. Պոլսի կեդր. վարիչ մարմինը դէմ գնաց այդ որոշման, և առաջ եկաւ կուսակցութեան մէջ կէս-պառակտում մը։ Ասոնք բոլորը զրուեցան պոռոտ թօնով մը նոյն կուսակցութեան Եւրոպայի և Ամերիկայի օրգաններուն մէջ և որով ընականաբար թիւրք կառավարութիւնն ալ օրը օրին տեղեկացաւ բոլոր անցուդարձին։ Եւ երբ որոշուած ու կառավարութեան հաղորդուած էր յուլիս 20-ին հնչակեան պատգամաւորական ժողով գումարելու որոշումը, ահա Բուրգազլէն եկող երկու անձերու. վրայէն իբր թէ գտնուած թուղթերու պատճառաւ կատարուեցան վերջին ձերբակալութիւնները։ Առ այժմ փակուած և կնքուած է միմիայն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան ուսանողական միութեան օրգան «Կայծ» թերթի խմբագրութիւնը։ Պերայի մէջ։ Եթէ երբէք ստոյգ իսկ ըլլայ Սաբահ-Դիւլհանի նամակներու ձեռք անցուիլը, այնու ամենայնիւ հնչակեանները իրենց մէջ փնտռելու են ամեն ինչ տեղն ու տեղը կառավարութեան ցոյց տուողը։

Դաշնակցականներ ղէմ-ղէմի. — Օսմանեան մէբուսական ընտրութեան խնդիրը կերևի դիւրին չպիտի փակուի, նոյն ժողովը իր արտասովոր նստաշրջանը փակելէն ալ վերջը։ Այժմ ալ Դաշնակցութեան միջնաբերդ Էրզրումը կեդրոնին հետ խզած է իր յարաբերութիւնը։ Էրզրումի դաշնակցականները մէբուսական կանդիդատ ներկայացուցած էին Փատրմաճեանն ու Վարդգէսը, որոնցմէ վերջինը միայն կրցաւ յաջողիլ, մն ալ իթթիհատդին քծնելու շնորհիւ։ Երբ իրենց կանդիդատներէն մին ձախողեցաւ, Էրզրումցիները պահանջեցին Վարդգէսէն, որ ինք ալ հրաժարի, բայց այս վերջինը դիւրին չէր կրնար բաժնուիլ կեանքին մէջ երբէք չտեսած 50 ոսկի ամսականէն և մէբուսի ճոխ ու զեղխ կեանքէն։ ու Էրզրումցիներու պահանջը թողուց անլսելի։ Բայց վերջերս յարաբերութիւնները այնքան լարուած վիճակ մը ստացան և Էրզրումի մէջ Սահմ. Ռամկավար ակումբի կազմութիւնը այնքան դէշ ազդեց, որ Կ. Պոլսոյ կեդրոնը հարկ տեսաւ ամենաչքաւոր ընկերներէն Էրզրում ղրկել ադերց խօսք հակցնելու կամ պառակտման յանգելիք լարուածութիւնը հարթելու համար։

Վարդգէս ինք ալ ստիպուեցաւ կաղն ի կաղ Էրզրում մեկնիլ փոխան հրաժարագրի մեղայագրով մը գործը անուշ տեղը կապելու և հայրենակից տղերքը սիրաշահելու համար։

Տեսնենք Դաշնակցութիւնը ի՞նչպէս պիտի պարտէ այս պառակտումը։

Հեթում Հատեան

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

I

Էրզրում, 25 յուլիս

Զէնքի տակ է կոչուած ամբողջ Թիւրքիոյ ժողովուրդը (18—45 տարեկանները). օր-օրի, վայրկեան վայրկեանի վրայ կարգադրութիւնները կը փոխուին, անոնց հետ ալ տրամադրութիւնները։

Երէկ մինչև 31 տարեկանները պիտի զէնքի տակ կոչուէին (հայերը), իսկ այսօր մինչև 45-ը։ Հայերը կրնան զինուորական փոխանակութիւն վճարել 30 ոսկի և ազատիլ։ այդ նոյն բանը չկայ թիւրքերու համար։ Երէկ փոխանակութիւնը (դրամով) չկար, այսօր եղաւ։ լուր կայ, որ 30 ոսկին 50-ի պիտի հասնի։ Օտարահպատակները հնարաւորութիւն չունին քաղաքէն հեռանալ, վասնզի բոլոր ձիերը, կառքերն ու սայլերը գրաւուած են կառավարութեան կողմէ։ Կառավարութեան ցինիկութիւնը այն աստիճանի է հասեր, որ իրենց պէտքերուն (փոխադրուելու) համար ձեռք բերած օտարահպատակներու ձիերն ու կառքերն ալ կը գրաւէ։

Ամեն տեղ լաց ու կոծ, ամեն տեղ անհրեկում, ամեն տեղ կսկիծ ու դարդ։ Գիւղացին զրկուած է իր եզէն, սայլէն, աշխատող ձեռքերէն, մայրերը՝ իրենց զաւակներէն։

Ժանդարմներու գազանութիւնն ալ չափ ու սահման չունի։ Անցեալ օր դաշտի միջով գացող երկու հոգի զնդակահարեր են, պատճառաբանելով թէ զինուորութենէ փախուստ կուտային։

Բոլորը փախչելու ճամբայ կրծոնեն, բայց այդ ճամբան ալ չկայ։ Փախչիս վայ, չփախչիս՝ նոյնէն վայ։ Այս ամենուն հետ կառավարութիւնն ալ ոչ հաղուստ ունի, ոչ կօշիկ, ոչ հաց՝ զինուորներու համար և ոչ ալ բնակարան։ Կը պահանջեն, որ ունեցողները իրենք հաղուստ ձեռք բերեն. բոլոր զինուորացուները պարտական են իրենց տունէն իրենց 5 օրուան հացն ու ապրուստը հայթայթել։ Օշախի միակ սիւնը զինուոր ըլլալով՝ ինչպէս հայթայթէ թէ ընտանիքին և թէ իր օրական պարէնը, քանի որ ինքը աշխատելու հնարաւորութենէն զուրկ է։ Մէկ խօսքով՝ թէ կառավարութիւնն է գլուխը կորնցուցած և թէ ժողովուրդը։

Քնիչներէն Հօքը եկաւ, բայց ով այս ատեն Հօքը կը ճանչնայ։ Ժողովուրդը ընդհառաջ անգամ գացած չունի և վնցամսեայ նիքեան անուանով է մկրտած։ Կառավարութիւնն ալ, որքան կարելի է, չանք չխնայեց, որ ընդունելութիւնը աննկատելի ըլլայ և կարևորութիւն չտուի... Թնդանօթ անգամ չարձակուեցաւ քննիչի մը համար, մինչդեռ հասարակ վալիի մը համար չէին զլանար...

Վայրկեանէ վայրկեան կը սպասուի պատերազմի յայտարարութիւնը։ Իրազեկ

II

Կունդեմիր (Վարդօ), 14 յուլիս

Այն ամեն անարգանքներուն, որոնց ենթակայ է այսօր՝ թիւրք սահմանադրական բէժիմի օրով հայ ժողովուրդը, բանապետութեան ատեն անգամ չէ տեսած. այն ամեն հարստահարութիւնները, ծեծն ու բռնութիւնը, զորս՝ կը տանի վարդովցին մէշրութիէթի պաշտօնեաներու կողմէ, սուլթան Համիդի օրով անգամ չէ երազած։

«Մշակի» ընթերցողներուն արդէն յայտնի է բանականցոց և այլ գիւղացիներու վերաբերմամբ զօրահաւաք ժանդարմներու կողմէ կատարուած սրիկայութիւնները անցեալի իմ մէկ թղթակցութեամբ. այժմ ալ նոյն երևոյթը կը շարունակուի և ալ աւելի ահռելի չափերու կը հասնի։

Անցեալները մեր գիւղը եկաւ Ֆէրմօ չաւուշը հինգ հատ ժանդարմով և գիւղէն պահանջեց Ռուսաստան զաղթած քանի մը զինուորացուներ. և որովհետև անոնք փախստական չէ որ անցած են Ռուսաստան, այլ թիւրք կառավարութեան թոյլտուութեամբ՝ օրինական անցագրով և այն ալ անապաւէններու (մուհիսիզ) զինուորական ծառայութիւն կատարելու օրէնքի հրատարակումէն առաջ, գիւղի մեծերը չաւուշին դիտել տուին, որ փոխանակ գալու և ժողովուրդը տանջելու՝ աւելի լաւ չէ նախ իշխանութիւնէն իմանալ, թէ իրաւամբ այդ զինուորացուներն օրինական ճանապարհով մեկնած են երկրէն թէ ապօրէն, և եթէ օրինական են, այն ատեն ալ ոչ ինքը նեղութիւն կրէը գար և ոչ ալ ժողովրդին զահմէթ տար։ Բայց չաւուշը բան չուզեց լսել, անպատճառ զինուորացուները ուզեց և քանի մը ապտակներու հետ հայհոյութեամբ մեծերն իրենց տունը քշելով խուզարկութիւն ըսկսաւ զինուորացուներու տները։ Ամեն ինչ տակն ու վրայ ըրաւ, աղ ու ձախ ապտակներ իջեցուց, հաւատ, օրէնք հայհոյեց և վերջն ալ չբաւականանալով այս ամենով կնոջ Պետէեան մերկացուց, առանց ամօթը ծածկելու կտորի մը և իշու վրայ դրած թքնելով, մրելով, հարուածներ իջեցնելով մերկ մարմնոյն վրայ և հայհոյելով գիւղի փողոցներով պտտցուց։

Խեղճ կնոջն, որ պատուաւոր մարդ մըն է և գիւղի յարգանքը կը վայելէ մեծէն մինչև պզտիկը, ձեռքով ամօթը ծածկած՝ աչքերը փակ, այս անպատուաբեր երևոյթէն ամօթահար, ձայն հանելու հնարաւորութենէն զուրկ՝ միայն և միայն կուլար և առ Աստուած խուլ մրմունջ կուղղէր, որ անօրէնը խղճի գար և այդօրինակ անարգանքէ ազատէր զինքը։ բայց խիղճը մարդ գազաններուն չէ տրուած։ Վերջապէս ժամ մը ետք մարելու հասած կնոջն իշու վրայէն իսկաւ, և այդ թէև հնարաւորութիւն տուաւ ազատելու անոր մարմինը, բայց չազատեց անոր պատիւը։ Կնոջի տեղ այժմ մերկացուած անոր կինն էին նստեցուցած, այդ ալ միայն այն տարբերութեամբ, որ լոկ վարտիկը թողուցած էին վրան։ Կինն ալ նոյն տանջանքներուն, հայհոյութեան, ծեծին ու անարգանքին կէս ժամ ենթարկուելէ յետոյ ազատ թողուեցաւ, և այդ ալ մութին մէջ լուսատու կաշառքի շնորհիւ...

Երկու երեք օր մնացին այդ մարդիկ գիւղին մէջ, և ինչե՞ր ըսես, որ չըրին, այստեղ մանրաման նկարագրելու ոչ սիրտ կայ և ոչ գրիչ։ վերը յիշուած օրինակը արդէն կը բնորոշէ անոնց գործելակերպը։

Այսքանը ըսեմ, որ անոնց բռնութիւններու և գազանութիւններու զոհ եղան և Գէորգեան Պետրոս՝ որուն գլուխը 3 տեղէն պատռած են, Մուրադ Բարսեղեան, Մուշեղ Նահապետեան, Բալօ Սահակեան, Խանդլի Սարգիս Մելքոնեան և շատ ուրիշներ ու միջամտողներ... Գացին Կիւմկիւմ, կառավարութեան բողոքեցին գիւղացիք և այս անգամ ալ, ինչպէս միշտ, «միջբնա բաքարը» կառավարութեան սովորական անբովանդակ դարձուածքը լսեցին իբր պատասխան իրենց բողոքի։ Վարդովցի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Տակաւին 30 տարի սրանից առաջ, անգլիական մի ընկերութեան աշխատում է կօնցեսիա ձեռք բերել Բաշրից մինչև Թէհրան և այնտեղից էլ մինչև Պարսից-ծոցը երկաթուղագիծ կառուցանելու։ Գործը սկսելու համար շատ կարճ ժամանակամիջոց էր նշանակված։ Կօնցեսիան ձեռք բերողները պէտք է բոլոր պիտոյքները հայթայթէին Անգլիայից, Կովկասի վրայով։ Եւ թէև պայմանաժամը լրանալուց շատ առաջ բէյլները հասած էին Բագու և մի օրվայ ընթացքում կարելի էր հասցնել Էնզէլի ու չը զրկվել պայմանական իրաւունքից, սակայն մի մեծ թիւրիմացութեամբ՝ նաւային ընկերութիւնը փոխանակ այդ նաւերը Էնզէլի տանելու, տանում և ցած է թափում հեռաւոր Մէշէդիսէրում։ Այդպիսով անգլիական ընկերութիւնը կորցնում է իր կօնցեսիայի իրաւունքը։ Միւս կողմից նաւային ընկերութիւնն արդարանում է, ըստ ծովային օրէնքների՝ ապացուցելով, որ փոթորիկն է նաւերին քշել դէպի Մէշէդիսէրի կողմերը և պարտաւորեցրել այնտեղ ժամանակաւորապէս դատարկելու իրանց բեռը։ Այսպիսով խնդիրը փակվում է։

Ամենքն էլ հաւատացած էին, թէ այդ պարզ թիւրիմացութիւնից մի մեծ բարիք է ծնվելու ռուսական արդիւնաբերութեան համար և թէ նոյն կօնցեսիան անցնելու է ռուսաց ձեռքը և շուտով օրինաւոր հաղորդակցութեամբ Ռուսաստանը կապվելու է Պարսկաստանի բոլոր խուլ անկիւնների հետ՝ յօգուտ ռուսական արդիւնաբերութեան ծաւալման։

Սակայն, անցնում են տարիներ, տասնեակ տարիներ, և՝ ոչ միայն ոչ մի ձեռնարկութիւն չէ լինում, այլ և եւրոպական արդիւնաբերութիւնները՝ Տրապիզոնի, Էրզրումի և Բայազիտի ճանապարհով, ուղտերի դանդաղաշարժ կարաւաններով, տասն անգամ աւելի երկար և տաժանելի ճանապարհ անցնելով, բոլորովին ազատ կերպով մրցում են մի քանի քայլի վրա գտնվող Ռուսաստանի դէմ, և այն էլ ոչ թէ ինդուստրիական տեսակէտից բարձր որակի ապրանքներով, այլ և ռուսականից շատ ստոր ապրանքներով, օրինակ՝ թէյ, շաքար, նաւթ, լուցկի, չիթեղէն, յախճապակի և այլն։ Ամենափոքրիկ ջանքերն իսկ բաւական էին, ինչպէս այդ եղաւ հայ վաճառականների ինքնաբերաբար վերջերս ցոյց տուած եռանդով, զարկ տալ ռուսական արտահանութեան և ներմուծութեան։

Վերջապէս, ռուսական «Պօլեակով» ընկերութիւնը աջողեց ձեռք բերել Էնզէլի-Դազվին-Թէհրան շօսսէ կառուցանելու կօնցէսիան։ Տարիների ընթացքում, քառապատիկ վատնումներով կառուցվեց շօսսէն, բայց տեխնիկական այնպիսի անյարմարութիւններով, որ ոչ միայն այսօր իւրաքանչիւր տարի ահագին վերանորոգումների ծախքեր է պահանջում, այլ և՝ աւտոմօբիլային հաղորդակցութիւն հաստատելու համար, կարիք է զգացվում հիմնական բարեփոխութիւնների։ Ինչ մի առանձին դեր խաղաց այդ շօսսէն ռուսական վաճառականութեան համար։ համեմատաբար շատ չնչին։ Սահմանագլխից (Էնզէլիից) մինչև Թէհրան ընդամենը 300 վերստ է, սակայն ապրանքը հասնում է տեղ մի քանի ամիսների ընթացքում և այն էլ պուդը երբեմն 3—4 ր. վարձով։ Եթէ ժամանակի վատնումը, վարձի արժէքը, ճանապարհին ջարդված-վնասվածն էլ հաշուելու լինենք, կը տեսնենք Եւրոպայից պոստային կապոցներով եկած ապրանքները աւելի ձեռնտու են վաճառականի համար, քան Ռուսաստանից ֆուրգօնով և ուղտերով եկած ապրանքը։

Մի այլ պատճառի չէ կարելի վերագրել այն հանգամանքը, որ այսօր պոստային կապոցներով Եւրոպայից աւելի շատ ապրանք է մտնում Պարսկաստան քան մեր քթի առաջ եղած Ռուսաստանից։ Շատերը թերևս այն կարծիքն ունենան, թէ եւրոպական ապրանքի ծաւալման պատճառը նրա բարձր որակն է. կարող եմ ընթերցողիս վստահացնել, որ բոլոր յետամնաց երկիրներում, ինչպէս և Պարսկաստանում, որակը շատ էլ մեծ դեր չէ խաղում, այլ աւելի շուտ արժէքի չափաւորութիւնը։ Գերմանական ֆալսիֆիկացիան իր չափաւոր արժէքներով շատ աւելի է տարածվում, աւստրիական կեղծ գործուածքներն աւելի գնորդներ են գտնում, քան անգլիական և ռուսական դիմացկուն, մաքուր գործուածքները։ Ճիշդ է, ռուսական պետութիւնը՝ որոշ զիջումներ, զեղչեր, սուբսիդիաներ տալիս է վաճառականներին, սակայն ուրիշ կողմերից այնպիսի դժուարութիւններ է յարուցանում, որոնցից ազատ է Եւրոպայի հետ կապված վաճառականը։ Օրինակ՝ իւրաքանչիւր ռուսահպատակ տարեկան 30—40 ր. միայն անցագրի պէտք է տայ, ռուսական ապրանքները փոխադրող սայլերն ու կառաւանները պէտք է ահագին ռահդարի (ճանապարհի տուրք) վճարեն, որպիսի գումարը կրկնապատիկ բարդում են ապրանքի վարձի վրա, փոխադրական ընկերութիւնները չեն ենթարկվում պետական խիստ հսկողութեան, որով ապրանքները Բագուից մինչև Էնզէլի, որ մի օրվայ ճանապարհ է միայն, շատ աւելի ուշ է հասնում, քան Նիւ-Եօրկից և Լօնդօնից ուղարկված ապրանքը։ Կենդանի օրինակ. նոյեմբեր ամսին, Թիֆլիսից Էնֆիլադեան գործարանը ապրանք է ճանապարհում Էնզէլի. Թիֆլիսից Էնզէլի ուղիղ գծով երկու օրվայ ճանապարհը՝ տրանսպօրտային ընկերութիւնը ուղիղ վեց ամսից յետոյ է ապրանքը հասցնում տեղ, ուր պատուէրատուողը հրաժարվում է ընդունել. մինչդեռ նոյն պատուիրողը, նոյն ժամանակամիջոցում երեք-չորս անգամ պատուէրներ է տալիս Նիւ-Եօրկ, Լօնդոն, Բերլին և ապրանքները ստանում՝ վաճառում, նորից պատուէրներ տալիս։ Այս բոլորի վրա եթէ աւելացնելու լինենք եւրոպական դեսպանատանց և հիւպատոսարանների լուրջ վերաբերումն ու մանակցութիւնը զուտ վաճառականական գործերին, կը գանք այն եզրակացութեան, որ եթէ Ռուսաստանը կամենում է տիրապետել պարսկական շուկային, պէտք է աւելի լուրջ վերաբերում ցոյց տայ, պէտք է խիստ հսկողութիւն նշանակի տրանսպօրտային ընկերութիւնների գործողութիւնների վրա, պէտք է հաղորդակցական ամեն տեսակ դիւրութիւններ տրվեն, պէտք է անցագրային օրէնքները փոխվեն, պէտք է զուտ վաճառականական ագէնտներ նշանակվեն հիւպատոսարաններին կից, որոնց պարտականութիւնը լինի բացի վաճառականների մէջ եղած թիւրիմացութիւնները պարզելուց, այլև՝ ծանօթացնել տեղական ազգաբնակութեանը ռուսական առևտրի և արդիւնաբերութեան հետ, հաստատել Թէհրանում, Թաւրիզում, Սպահանում, Բաշտում, Համադանում առևտրական պալատներ կամ բիւրօներ, դիւրութիւններ տալ մանաւորապէս ճիւղեր հաստատել Պարսկաստանի նահանգական քաղաքներում, որոշ միջոցներ գործադրել կանոնաւորելու պարսկական արծաթ դրամի կուրսի անընդհատ ելևէջները, որոնք շատ անգամ կատարվում են կամայականօրէն, զանազան տարրաֆիների և քանկային հաստատութիւնների խաղերով։ Ահա միջոցներ, որոնց լուրջ ձեռնարկութիւնից է կախված ռուսական առևտրի բարգաւաճումը։ Կանցնեն մի քանի տարիներ ևս, կը շնչվի Բաղդադի երկաթուղագիծը՝ իր դէպի պարսկական սահմանագլուխը տանող ճիւղերով, գերմանական ամեն տեսակ ապրանքներով կը հեղեղվի Պարսկաստանը, այն ժամանակ ոչ միայն այլևս դժուար կը լինի ժողովրդին վարժեցնել նոր ապրանքների հետ, այլև թերևս երևան գան նորանոր շահերի և քաղաքականութիւնների բաղխումներ, որոնք կարող են արգելք դառնալ ռուսական առևտրի բարգաւաճմանը։ Քանի ժամանակներն ու յարմարութիւնները մեր ձեռքն են՝ չենք օգտվում. կարող է իրերի դրութիւնը փոխվել, այլևս՝ որքան էլ միջոցներ գործադրենք և ձգտենք՝ անհասանելի կը լինի մեզ։ Պարսկաստանը բնականաբար ստեղծված է ռուսական շուկայ լինելու. եթէ այդ բանից օգտվել չը կարողանայ ռուսական վաճառականութիւնը, ինքն է մեղաւոր։

Մաք
Ղազվին

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Բ. ԻԳԽԱՆԵԱՆԻ
„ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԵՄԸ“
(Քննադատական վերլուծութիւն) գրքոյկը, եր. 97, գինը 20 կոպ.։
Դիմել «Գուտտենբերգ» և «Կենտրօնական» գրավաճառներին և «Մշակի» խմբագրատեղի։ Բացառ՝ «Сегаль» գրախանութին նոյն տեղերը վաճառվում են հեղինակի միւս երկերը։ (օ. մ.) 716. 10—8

Լոյս տեսաւ
Գ. ՏԷՐ-ՌՈՒԲԻՆԵԱՆԻ
„ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ“
(Հայ տուրիստի դիտողութիւնները)
Գինը 10 կոպէկ։
Ստանալ կարելի է «Մշակի» խմբագրատեղ. օտար քաղաքներից ուղարկել 14 կոպ նամակագրոշմ։
(օ. մ.) 737. 3—3

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրթէնի, I և II հատորներ	1 ր.	50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի		40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր.	20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի		40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ		15 կ.
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի		50 կ.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.	
8) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի		40 կ.
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի		40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի		35 կ.
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՄԵԱԿԸ, նկարներով		15 կ.
12) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ Մ.-ի		15 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ զրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		30 կ.
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի		80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր.	50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլերի, թարգմ. Իս. Յարութիւնեանի.		40 կ.
18) ՓԱՐԱՒՕՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղեկեանի.		15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАН Е РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.		20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՒՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շեխանի		20 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շեխանի		25 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը հնի միայն 25%։ (6) 10—10

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный